

**ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ  
ԾԱԽՄԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Հարկաբյուջետային քաղաքականությունը երկրի մակրոտնտեսական քաղաքականության կարևոր բաղադրիչներից մեկն է, հետևաբար, պետական ծախսերի քաղաքականությունը երկրի մակրոտնտեսական զարգացման մոդելի յուրով արտահայտիչ է և պետական ծախսերի քաղաքականության ցանկացած ուսումնասիրություն պետք է սկսել երկրի մակրոտնտեսական զարգացման առանձնահատկությունների համատեքստում:

Ωραρισμένη στην περιοχή της Αράκωνας στην πόλη της Καρδίτσας, η οποία αποτελεί την μεγαλύτερη πόλη της Ελλάδας, η οποία είναι γνωστή για την παραγωγή και εξαγωγή της αράκωνας, η οποία είναι ένα από τα πιο διάσημα προϊόντα της χώρας.

1. Նեղիբերալ մողել. Այն բնորոշ է անզլուսաքտնական երկրներին՝ ԱԱՆ, Մեծ Բրիտանիա, Իռլանդիա և Նոր Զելանդիա: Նեղիբերալ անզլուսաքտնական մողելը ծևավորվել է 1980-ական թթ. և 1990-ական թթ. սկզբին և բնութագրվում է տնտեսության մեջ պետության ոչ մեծ դերով և ծեռարկատիրական գործունեության ակտիվությամբ: Նշանակած երկրներում, համեմատած այլ զարգացած երկրների հետ, բավականին նվազել է պետական սեփականության մասնաբաժնը, նվազել է պետական ծախսերի հարաբերությունը եկամուտներին, որոշ չափով նվազել է նաև բնակչության տողիալական պաշտպանվածության մակարդակը: Անզլուսաքտնական երկրները ներկայումս աշքի են ընկնում տնտեսական զարգացման բարձր տեմպերով: Մոդելի բերությունը բնակչության տարրեր շերտերի միջև եկամուտների կտրուկ արտահայտված տարրերությունն է:
  2. Սոցիալական շուկայական տնտեսություն. Այն բնորոշ է մայրցամաքային եվրոպական երկրներին, Կանադային, Խորայիշին: Այս երկրներում պատմականորեն բարձր է պետության դերը, հարաբերականորեն բարձր է պետական սեփականության բաժինը և պետական ծախսերի մակարդակը, իրականացվում են բնակչության տողիալական պաշտպանության լայնամասշտար ծրագրեր: Պետությունը տնտեսության մասնավոր հատվածի եկամուտները վերաբաշխում է հարկային համակարգի միջոցով, որը բավականաչափ բարձր է ծեռարկությունների և բարձր եկամուտներ ունեցող անձանց շրջանակի համար: Իր բնույթով այս մողելը իրենից ներկայացնում է սոցիալ-լիբերալիզմ՝ որոշակի փոխգործումային տարբերակ, կապիտալիզմի և սոցիալիզմի միջև, ինչը նպաստում է հասարակության մեջ որոշակի ներդաշնակության ստեղծմանը: Այս մողելի բերություններից են գործազրկության բարձր մակարդակը, պետական բյուջեի դեֆիցիտը, տնտեսության առանցքային ճյուղերում պետական ծեռարկությունների ցածր արդյունավետությունը:
  3. Երրորդ մողելը բնորոշ է Արևելյան Ասիայի երկրներին՝ ճապոնիա, Հարավային Կորեա, Թայվան, Մինչապուր: Այս տնտեսություններին բնութագրական է յուրահատուկ արևելյան կլանայնությունը, պետության և ծեռարկությունների շահերի միախառնվածությունը, ազգային տնտեսությունների արտահանման ուղղվածությունը: Արևելյան Ասիայի երկրների տնտեսական զարգացման մեջ առանձնահատուկ կարևորվում է պետության դերը, ազգային տնտեսությունների գերակա ուղղությունները նիշտ որոշելու, արտահանման խթանման և արտասահմանյան մրցակիցներից տեղական արտադրողներին պաշտպանելու պնտության հետևողական քաղաքականության շնորհիկ Արևելյան Ասիայի երկրների մեծ մասը 1950-ական թթ. հետամնաց գյուղատնտեսական երկրներից 1990-ական թթ. վերածվել էն զարգացած արդյունարքական երկրների:

Հայաստանը, ինչպես նախկին սոցիալիստական բոլոր երկրները, որոնց բնորոշ էր տնտեսության վարչականացման բնույթը, 1980-ական թթ. վերջերից ընտրել է զարգացման շուկայական ճանապարհը և այժմ համաշխարհային տնտեսության մեջ հանդես է զայխ որպես անցումային երկիր:

Երկրի զարգացման մողելի ընտրությունը կախված է բազմաթիվ գործոններից՝ երկրի աշխարհագրական դիրքից, ազգային մշակույթի զարգացման առանձնահատկություններից, սոցիալ-տնտեսական գործոններից և այլն: Հնարավոր չեն միանշանակ պնդել, թե զարգացման այս կամ այն մողելը լավագույնն է: Ցուրաքանչյուր երկիր ունի իր չկրկնվող առանձնահատկությունները, և նույն, նույնիսկ իդեալական մողելի կիրառումը աշխարհի բոլոր երկրներում միաժամանակ հնարավոր չէ:

Ակնհայտ է նաև, որ աշխարհում չկա բացարձակ լիբերալիզմ և բացարձակ սոցիալիզմ, և յուրաքանչյուր երկրում գործում է որոշակի կոմպռոմիսային տարրերակ՝ սոցիալական շուկայական և լիբերալ շուկայական տնտեսությունների միջև (Տնտեսական պատության ամրող ընթացքում կարելի է տեսնել տարերային անզումներ ազատ շուկայից դեպի անտառականացում և իներակառ):

Հաշվի առնելով, որ տիպային մոդելների սահմանազատումը պայմանական է և ոչ կատեգորիկ, ուսումնասիրության այս փուլում հավակնություն չունենք միանշանակ պնդելու զարգացման այս կամ մոդելի կիրառման օգտին: Կարծում ենք, որպես անցումային երկիր, ենելով իր բնական, աշխարհաքաղաքական և մշակութային պայմաններից, ուսումնասիրելով յուրաքանչյուր մոդելի առանձնահատկությունները, զարգացման այս փուլում Հայաստանի Հանրապետության նակրոտնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի մոդելների առավելությունների հնարավորինս համադրմանը՝ նվազագույնի հասցնելով թերությունները: Այսպես, եթե մրցակցության խթանման տեսակետից նախընտրելի է լիբերալ տնտեսությունը, ապա աղքատության հաղթահարման ուղղմավարական նպատակի առկայությունը փաստարկ է սոցիալական շոկայական

<sup>1</sup> А. И. Погорлецкий «Экономика Зарубежных Стран», Издательство Михайлова В. А. Санкт-Петербург 2000, с. 116:

տնտեսության օգտին, իսկ փոքր ուսուրաներով արագ զարգանալու արևելյան մողելը կարող է բավականաշափ կիրառելի առանձնահատկություններ պարունակել Հայաստանի համար:

Հակիրծ ներկայացնենք այդ մողելներով զարգացող մի քանի երկրների տնտեսական պատմության առանձնահատկությունները:

Սոցիալական ուղղվածություն ունեցող տնտեսության տիպիկ օրինակ է հանդիսանում Ֆրանսիան<sup>1</sup>: Այստեղ պետությունը վերաբաշխում է ՀՆԱ-ի 54%-ը, իսկ պետական հատվածում զբաղվածները կազմում են ընդհանուր զբաղվածների 24%-ը: Ֆրանսիային բնորոշ է քաղաքացիներին տրվող սոցիալական երաշխիքների զարգացած համակարգը. այս երկրում կենսաբոշակային տարիքի անցնում են ավելի վաղ տարիքում՝ 50-55 տարեկանում, կենսաբոշակները և գործազրկության նպաստները բարձր են երեմն նույնիսկ միջին աշխատավարձից, պետական ծառայողները աշխատանքից չեն կրճատվում և վարձատրվում են ավելի բարձր, քան մասնավոր հատվածի աշխատողները: Ֆրանսիայում ի սկզբանն ինդիքտ էր դրված ընդլայնել զբաղվածությունը պետական հատվածում, մինչև այժմ բարձր հեղինակություն ունի պետական ծառայությունը, համարյա բոլոր ֆրանսիացները գտնում են պետական ծառայության, իսկ մասնավոր ծեռնարկատիրությամբ շատ քերն են ցանկանում զբաղվել: Պետությունը պատշաճ ուշադրություն չի դարձնում տեխնոլոգիական բազայի զարգացմանը, իսկ պետական ծառայողները առանձնապես շահագրգուված չեն իրենց աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու հարցում: Ֆրանսիային բնորոշ է ուղենիների արտահոսքը, որովհետև բուհերը հիմնականում պատրաստում են պետական հատվածում աշխատող կադրեր, չեն պատրաստում բարձրորակ մենաշերներ և ի վիճակի չեն արագ արձագանքել աշխատանքի շուկայի փոփոխություններին: Այս տնտեսության թերություններից է այն, որ երկրում զբաղվածությունը կրճատվում է, բոշակառուների թիվը և բնակչության սոցիալական բնույթի եկամուտներն աճում են: Զարգացման այս միտումների պահպանումը կարող է շուտով խնդիրներ առաջացնել պետական ֆինանսների ոլորտում (դեֆիցիտ/ՀՆԱ և պարտք/ՀՆԱ ցուցանիշների աճ) և հանգեցնել երկրի մրցունակության նվազման:

Ֆրանսիայի օրինակը ցույց է տալիս, որ պետական սոցիալական քաղաքականության շափից ավելի շեշտադրումը կարող է բացասաբար ազդել մասնավոր ծեռնարկատիրության խրանման վրա, նվազեցնել մասնավոր նախաձեռնությունը և խնդիրներ ստեղծել պետական ֆինանսների բնագավառում: Սոցիալական երաշխիքների գերհագեցած համակարգը կարող է խոշընդունել երկարաժամկետ և կայուն տնտեսական աճը:

Անգլիական տնտեսական զարգացման մողելը տարրերվում է վերը նշված շուկայական զարգացման մողելից պետության ավելի պահիվ դերով և մասնավոր ծեռնարկատիրության խրախուսմամբ: Ժամանակակից անգլիական նեղիներալ տնտեսության հիմքերը դրվել են 1980-ական թթ. տնտեսական բարեփոխումներով<sup>2</sup> (Թետշերիզմ), որոնք ուղղված էին շուկայական մեխանիզմների ամրապնդմանը՝ մասնավորեցման, տնտեսության կարգավորման և հարկային բարեփոխումների միջոցով: Բավական է նշել, որ կառավարության ծախսերը 1982թ. 47.5%-ից 1996թ. դարձան ՀՆԱ-ի 41.6%-ը, իսկ պետական հատվածը արտադրում է ՀՆԱ-ի 8%-ը: Պետությունը բարեփոխումների արդյունքում ազատվեց ոչ արդյունավետ և վճարված աշխատող ծեռնարկություններից, որոնք մասնավոր սեփականության առկայությամբ դարձան եկամուտը: 1979-1994թթ. մասնավորեցման արդյունքում Մեծ Բրիտանիայի պետական բյուջե մուտքագրվեց 55.5 մլրդ ֆունտ ստերլինգ: Մեծ Բրիտանիայի տնտեսական քաղաքականությունը ուղղված է տնտեսության ուղղակի կարգավորման նվազմանը, ներքին շուկայում մրցակցության խրախուսմանը, մասնավորեցմանը և մասնավոր հատվածի աշխուժացմանը, պետության կողմից միայն այն ճյուղերի զարգացման հովանավորությունը, որոնք կենսականորեն անհրաժեշտ են ազգային տնտեսության զարգացման համար, սակայն այս ճյուղերի զարգացման համար շուկայական մեխանիզմները անարդյունավետ են (ատոմային էներգետիկա, տրանսպորտի որոշ տեսակներ և այլն):

Որպես տիպիկ նեղիներալ տնտեսություն, հակիրծ ներկայացնենք նաև ԱՄՆ-ի տնտեսական զարգացման որոշ առանձնահատկություններ<sup>3</sup>:

1929-1933թթ. Մեծ ճգնաժամից դուրս գալու նպատակով ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը ներկայացրեց իր հայտնի «Նոր կորուս», որը ներառում էր ֆինանսական օրենքներ, տնտեսության կառուցվածքային փոփոխություններ, սոցիալական օրենքներ, տարածքային զարգացման քաղաքականություն: Սոցիալական քաղաքականության առումով կարելի է նշել ցածր եկամուտներ ունեցող անձանց զբաղվածությունը ազատիկության համար հասարակական աշխատանքների կազմակերպությունը: «Նոր կորուս» շրջանակներում իրականացվել են շուրջ 400.000 տարրեր ծրագրեր, որոնց արդյունքում կառուցվել են մոտ 50 օդանավայաններ, բազմաթիվ ճանապարհներ, դպրոցներ, տարրեր ենթակառուցվածքներ: Ռուզվելտի «Նոր կորուս» իրականացվեց բարեհաջող կերպով (ինչի մեջ թիվ դեր խնադան նաև իշխանությունների քաղաքական կամքը) և Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում ԱՄՆ տնտեսությունը լիովին առողջացած էր:

Հետպատերազմյան շրջանում, Եվրոպական երկրների և ճապոնիայի արտադրական հզրությունների աճին զուգահեռ, ԱՄՆ-ի ՀՆԱ-ի տեսակարար կշիռը արդյունարերական զարգացած երկրների մեջ սկսեց կրճատվել: Համաշխարհային տնտեսության մեջ առաջատարի դիրքերը կորցնելու վտանգի ներք ԱՄՆ-ը սկսեց իրականացնել հետևյալ միջոցառումները. բարձր տեխնոլոգիական արտադրանքի համաշխարհային շուկայում դիրքերը ամրապնելու նպատակով զարգացվեցին հատկացումները գիտահետազոտական և փորձարարական բնագավառներում, խորացվեցին արդյունաբերության կառուցվածքային փոփոխությունները ի օգուտ գիտատար ճյուղերի, առաջացան և զարգացան ԳՏԱ խրախուսման նոր մեթոդներ: Հետպատերազմյան շրջանում ԱՄՆ-ում լայնորեն կիրառվում էր ամրողական պահանջարկի կառավարման Քեյնսյան

<sup>1</sup> Նշված աշխ., էջ 220-223:

<sup>2</sup> Նշված աշխ., էջ 229-231:

<sup>3</sup> Նշված աշխ., էջ 139-150:

քաղաքականությունը, որի հիմքում ընկած է լրիվ գրադադարյան և տնտեսական աճի բարձր տեմպերի ասյահովումը:

Զարգացման նեղունսերվատիվ փուլի սկիզբը ԱՍՆ-ում դրվել է 1980-ական թթ. նախագահ Ռեյգանի կողմից (ուշագանոմիկա): Ռեյգանոմիկայի հիմնական ուսումնական բաղկացուցիչը ԳՏԱ-ի խրախուսումն էր՝ գիտահետազոտական և փորձարարա-կոնսուլտորական բնագավառներում պետական ծախսերի մեծացման և մասնավոր ծախսերի խրախուսման (հարկային արտոնություններ) միջոցով: ԱՍՆ-ը ներկայումս զարգացած երկրների շարքում ամենամեծ հատկացումներն է կատարում գիտահետազոտական աշխատանքներին՝ ՀՆԱ-ի մոտ 3%-ը, ինչը երկարաժամկետ հեռանկարում ապահովում է երկրի առաջատար դիրքերը համաշխարհային գիտատեխնիկական առաջընթացում:

Ռեյգանոմիկայի արդյունքում տեղի ունեցավ անցում պետական միջամտության ակտիվ քաղաքականությունից կարգավորման անուղղակի մերողներին և մասնավորներման միջոցով զգալիորեն նվազեց պետական հատկածի մասնարաժինը տնտեսության մեջ:

ԱՍՆ-ի մակրոտնտեսական քաղաքականության մոդելը որոշակի ճշգրտումների ենթակվեց նախագահ Քյինբոնի իրականացրած բարեփոխումներով: Մասնավորապես, փոփոխությունների ենթարկվեց բյուջետային քաղաքականությունը և պետությունը վերադարձավ տնտեսության առավել ակտիվ կարգավորման դերին: Քյինբոնի բյուջետային քաղաքականության հիմքում ընկած էր բյուջեի դեֆիցիտի վերացման խնդիրը, որի շրջանակներում իրականացվում էր գիտական հետազոտությունների և փորձարարական աշխատանքների, սոցիալական ենթակառուցվածքների, կրթական ծրագրերի ընտրանքային հովանավորում: Միաժամանակ, Քյինբոնը առաջարկում էր մեծացնել տնտեսության պետական հատկածում ներդրումային ծրագրերը: Խրանչեցին պետական և մասնավոր ներդրումները գիտության և տեխնոլոգիաների, կրթության և աշխատանքային ուսուրական վերապատրաստման ոլորտներում: Ենթադրվում էր, որ սոցիալական ենթակառուցվածքների զարգացումը կարող է ապահովել տնտեսության հետագա աճը:

ԱՍՆ նախագահ Քյինբոնի կողմից երկրի մակրոտնտեսական զարգացման մոդելում կատարված փոփոխությունները հանգեցրին կառավարության ֆինանսների զգալի բարեկամման (Եթե 1992թ. ԱՍՆ պետական բյուջեի դեֆիցիտը կազմում էր 290.4 մլրդ դոլար, ապա 1999թ. ԱՍՆ-ը հասել էր 80 մլրդ դոլար հավելութի) և զարգացման նոր փուլի՝ «Նոր տնտեսության»:

Բերված օրինակները բույլ են տալիս եզրահանգել, որ նոյնիսկ ամենալիբերալ տնտեսության համարում ունեցող երկրները, ինչպիսիք են ԱՍՆ-ը և Մեծ Բրիտանիան, ճգնաժամերից դորս գալու և տնտեսության ակտիվ պետական կարգավորում: Զարգացման այն ժամանակահատվածներում, երբ տարրեր երկրներում բարձր է եղել աղքատության և գործազրկության մակարդակը, բավարար զարգացած չեն եղել տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքները, իրականացվել են տնտեսական կյանքում պետության ակտիվ միջամտություն և ընդլայնող հարկաբարության քաղաքականություն: Այդ մասին է վկայում, և «Նոր կուրսը» ԱՍՆ-ում, և այն հանգամանքը, որ կապիտալիստական և լիբերալ տնտեսության այնպիսի խոր արմատներ ունեցող երկրում, ինչպիսին Մեծ Բրիտանիան է, լայնածավալ մասնավորեցում էր իրականացվում ընդամենը 1980-ական թթ.: Իհարկե, բերված օրինակները ցույց են տալիս նաև, որ տնտեսության կարգավորումը չպետք է խանգարի ճենարկատիրական նախաձեռնությանը, ազատ մրցակցությանը և պետական ֆինանսների ոչ արդյունավետ կառավարմանը, ինչպես դա տեղի է ունենում Ֆրանսիայում:

Արևելյան Ասիայի երկրներից ներկայացնենք տնտեսության զարգացման ճապոնական մոդելի<sup>1</sup> որոշ առանձնահատկություններ.

1. Տնտեսության զարգացման մեծ խթան են համդիսանում բարձր որակավորում ունեցող կաղըերի առկայությունը: Հետպատերազմյան շրջանում ճապոնիայի կրթության ոլորտում կատարված ներդրումները հանգեցրին նրան, որ ճապոնիայում զրադաների 90%-ը բակալավրին համապատասխանող կրթական մակարդակ ունի: Այս գործոնը զգալի ներուժ հանդիսացավ ճապոնիայի հետագա զարգացման համար: Այս ոլորտում զգալի անելիքներ ունի Հայաստանը: Կրթության ոլորտի Խորհրդային տարիների նվաճումները զգալի կորուստներ կրեցին անցումային շրջանի առաջին տարիներին. անհրաժեշտ է և վերականգնել այդ կորուստները, և միաժամանակ շեշտադրել նոր պայմաններին համապատասխան կրթական համակարգի ստեղծումը:
2. Հետպատերազմյան ճապոնիայի հետեսական թոփչի հիմնական գործոններից մեկը բարենպատ արտաքին միջավայրն էր: 1940-ական թթ. վերջին երկրի ապառազմականացումը շատ արագ ստեղծեց բարենպատ արտաքին միջավայր երկրի զարգացման համար: Իհարկե, ճապոնիայի զարգացման համար մեծ դեր է խաղացել նաև «սառը պատերազմի» ժամանակաշրջանը, երբ ԱՍՆ-ը և Արևմտյան Եվրոպան բարեկամաբար են տրամադրվել ճապոնիայի նկատմամբ, ինչը հնարավորություն է տվել երկրին ներմուծել էժան տեխնոլոգիաներ, իրականացնել արդյունաբերության վերակառուցում՝ առաջարես բարձր տեխնոլոգիական արտասահմանյան ապրանքներ գնելու հիմքի վրա: Հայաստանի դեպքում արտաքին միջավայրը կարելի է գնահատել որպես անբարենպատ. ընդհանրական է ճապոնիայի հետ այն հանգամանքը, որ Հայաստանը և զարգացման մեծ ներուժ ունի տնտեսության ապառազմականացման առումով: Եթե քաղաքական հանգամանքները բարենպատ դառնան Հայաստանի համար՝ բույլ տալով նվազեցնել ուազմական ծախսերը Եվրոպական երկրների միջին ծախսերի աստիճանը, նկատելիորեն կփոխվի պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը և զգալի միջոցներ կազմակերպեն, ինչը սոցիալ-տնտեսական և հարկաբարության քաղաքականացության ճգրտումների անհրաժեշտություն կառաջացնի և կարող է լուրջ խթան հանդիսանալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար:

<sup>1</sup> Նշված աշխ., էջ 278-288:

3. Պետության և բիզնեսի համագործակցություն. բավականաշափ հետաքրքրական է ճապոնիայում պետության և բիզնեսի յուրօրինակ համագործակցությունը: Պետությունը մշակում է արդյունաբերության զարգացման ռազմավարություն՝ ստեղծելով պայմաններ որոշակի ճյուղերի զարգացման համար և փոփոխում իր առաջնահերթությունները՝ ծրագրված խնդիրների լուծման ընթացքից կախված: Այսպիսով, սկսելով ոչնչից, ճապոնիան ներկայում ստեղծել է իր սեփական հզոր գիտատեխնիկական բազմ և դարձել է կապիտալ արտահանող առաջատար երկրներից մեջ:

Որպես չափերով փոքր և ուղմական մեծ ծախսեր կատարելու դատապարտված երկիր, մեզ համար որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Խրայելը: Սա մի երկիր է<sup>1</sup>, որը մեծ նվազումների է հասել տնտեսական զարգացման ընդամենը 50 տարիների ընթացքում: Տնտեսության բնորոշ հատկանիշներից են արտաքին ֆինանսավորման մեծ ծավալները և պետության ակտիվ միջամտությունը տնտեսությանը: Հայրենադարձների մեծ հոսքերը ստիպում են պետությանը իրականացնել բնակարանաշինության, աշխատատեղերի ստեղծման և այլ հատուկ ծրագրեր: Պետական հատվածի բաժինը Խրայելի տնտեսության մեջ չուր 30% է:

Այս պետության հիմնադիրները իրենց պարագն են համարել երկիրը դարձել գիտելիքների և կրթության միջազգային կենտրոն: Խրայելը զարգացնում է իր սեփական տեխնոլոգիական բազան՝ առաջնահերթություն տալով գիտատար ճյուղերի զարգացմանը և գիտատար արտադրանքի արտահանմանը: Երկրում տեղի են ունեցել 3 խոշոր գիտատեխնիկական հայտնագործություններ՝ բժշկության, ագրոնոմիայի և կապի ու հեռահաղորդակցության բնագավառներում: Եթե ԱՄՆ-ի գիտատար արտադրանքի արտահանման տեսակարար կշռը ՀՆԱ-ում 2.3% է, ապա Խրայելինը՝ 2%:

Խրայելի նպատակառդպատճերությունը՝ դառնալ առաջատար ԳՏԱ-ում, բարձր որակավորված կադրերը և գիտության հովանավորությունը պետության կողմից տալիս են իրենց արդյունքը և Խրայելը համաշխարհային մակարդակով անվիճելի առաջատար է ուղմական տեխնոլոգիաների որոշ տեսակների, ալմաստի մշակման և աղամանի արտադրության, արեգակնային էներգիայի օգտագործման և գենային ինժեներիայի (գյուղատնտեսության) ոլորտներում: Խրայելի տնտեսությանը բնորոշ է պետական, մասնավոր և կոռպերատիվ սեփականության (հատկապես գյուղատնտեսության և տուրիզմի ոլորտներում) առկայությունը:

Խրայելը առանձնանում է նաև իր ուժեղ սոցիալական քաղաքականությամբ. մասնավորապես, երկրի բնակչության ածին ուղղված սոցիալական ապահովում, նորարարների տեղակորում՝ կադրերի պատրաստում և վերապատրաստում, ծեռնարկություններին վարկերի տրամադրում նոր աշխատատեղեր ստեղծելու նպատակով, բնակարանաշինություն, համընդհանուր բժշկական սպասարկում (առողջապահության ֆինանսավորումը կազմում է ազգային եկամտի մոտ 8%-ը):

Խրայելը որոշակի ընդհանրություններ ունի Հայաստանի հետ երկիր տարածքի և բնակչության փոքր լինելու, բնակչության միազգության, արտաքին ամրարենապատ միջավայրի առումներով: Զարգացման սկզբնական փուլում Խրայելը զգալի արտաքին օժանդակություն է ստացել, ինչի հնարավորությունը ունեցել է և ունի նաև Հայաստանը:

Խրայելի փորձը ցույց է տալիս, որ պատշաճ ուշադրություն դարձելով գիտության և տեխնիկայի ֆինանսավորման վրա, պետության կողմից հովանավորելով տնտեսության պրոգրեսիվ հատվածները, բժշկության զարգացման բարձր մակարդակ ապահովելով, հայրենադարձությունը խրախուսելով, բարձր որակավորում ունեցող կադրերի կյանքի բավականաշափ բարեկեցիկ պայմաններ ստեղծելով, միաժամանակ արտաքին քննամիների առկայության պայմաններում, կարելի է հասնել ցնցող հաջողությունների: Ըստ կարևոր հանգամանք է նաև այն, որ Խրայելը հանդիսանում է մտավոր ներուժի կենտրոն՝ Խրայելի միակ ուսուրսը ևս մարդկային ներուժն է:

Քանի որ մեր ուսումնասիրության առարկան պետական ծախսերի քաղաքականությունն է, հետևաբար, մակրոտնտեսական տիպային մողելների և մեզ համար որոշակի հետաքրքրություն ներկայացնող երկրների տնտեսական համակարգերի ամփոփ ներկայացնումը նպատակ ուներ որոշակի կողմնորոշիչների առանձնացնել պետական ծախսերի ոլորտում: Դրանք, ըստ մեզ, հետևյալն են.

- Թեև ժամանակակից տնտեսագիտական միտքը շեշտում է նեոլիթերալ մողելի առավելությունները էտատիզմի նկատմամբ, սակայն ոչ մի նեոլիթերալ ուղղությամբ զարգացող պետություն չի հրաժարվում տնտեսության բոլոր ճյուղերից. նույնիսկ ամենալիթերալ տնտեսությունների մի մասում ուղմակարգական նշանակություն ունեցող ճյուղերը հանդիսանում են պետական սեփականություն, բացի այդ բոլոր երկրներն էլ տնտեսական զարգացման որոշակի փուլում տնտեսական քաղաքականության լավագույն եղանակը եղել է տնտեսության ակտիվ կարգավորումը պետության կողմից:
- Ժամանակակից աշխարհում մրցակցային պայքարում առավելություններ ծեռք բերելու հնարավորություն ունեն միայն այն պետությունները, որոնք պատշաճ ներդրումներ են կատարում գիտության և կրթության բնագավառում: Դրա կարևորությունը հատկապես մեծ է ուսուրանություններ, ունենալ այդ առաջնահերթությունները ապահովող հստակ ուղմակարգական ծրագիր, որը պետք է փոփոխել ժամանակի պահանջներին զուգընթաց: Ինչը իր արտահայտությունը պետք է գտնի նաև պետական ծախսերում:
- Տնտեսության զարգացման կարևոր նախապայմաններից է զարգացած ենթակառուցվածքների առկայությունը, ուստի պետության կարևոր խնդիրներից է նաև ներդրումները ենթակառուցվածքներում:
- Իհարկե, անբարենպատ արտաքին միջավայրը լուրջ խոշնորու կարող է հանդիսանալ տնտեսության զարգացման համար և միջազգային տնտեսական հարաբերություններին խոշնորություն, և պետական միջոցները հեռանկարային ոլորտներին ուղղելու խանգարելու տեսակետից:

<sup>1</sup> Նշված աշխ.՝ էջ 309-312: